

Ա Ղ Բ Յ Ո Ի Ր Ս Ե Ր Ո Բ

(Մահվան 100-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր ԱԶԱՏ ՀԱՄԲԱՐՅԱՆ

XIX դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում հայազգային-ազատագրական շարժումների հետ միասին ծավալվում էին նաև հայդուկային կամ ֆիդայական (ֆեդայական) ելույթները: Օսմանյան պաշտոնական շրջանները հայդուկներին կամ ֆիդայիներին անվանում էին ավազակներ, դողնոր: Բայց նրանք այդպիսին չէին, այլ ազատամարտիկներ էին, որոնք պայքարում էին իրենց ժողովրդի պաշտպանության ու ազատության համար: Հայդուկները ժողովրդական վրիժառուներ էին, աշխատում էին արժանին հատուցել թուրք ու քուրդ զանազան հարստահարիչներին ու կեղեքիչներին իրենց հարապատեներին թալանելու, լլկելու և սպանելու համար: 1901 թ. սեպտեմբերի 3-ին Վանի ուսական փոխհյուպատոս Թումանսկին գրում էր Կ. Պոլսի իր դեսպանին. «Ֆիդայիները, իրոք, դայրացած և համբերությունից դուրս եկած մարդիկ են: Նրանք երգվել են մի կերպ վրեժխնդիր լինել իրենց ճշնշողներին»¹:

Հայդուկային հարցին անդրադարձել է դեռ Բաֆֆին իր «Հայդուկներ» հոդվածում: Նա ցույց է տալիս, որ հայդուկը դող կամ ավազակ չէ, այլ բռնակալությունից զուրկ և անտանջ ու հարստահարված ժողովրդի բողոքի ու պայքարի արտահայտիչը: «Հայդուկը ստրուկի բողոքն է իշխող բարբարոսությունից դեմ»²: Նա ժողովրդական վրիժառու է և տառապողների վրեժն անելու համար թողնում է բնտանիքն ու տունը, բարձրանում է լեռները, թաքնվում կիրճերում ու անտառներում և «իր որձից մահ և սարսափ է սպանում իր շրջակայքի վրա»³: Նա մորթում է, կողտպտում է, այրում է, բայց ոչ թե հարստահարվող ու տառապող դանդախներին, այլ նրանց թշնամիներին, ճշնշող ու կեղեքող վերնաշերտերին:

Բաֆֆին հայդուկի մեջ տեսնում էր ոչ միայն ժողովրդական վրիժառուին, այլև հեղափոխականին, հայրենիքի ազատության զինվորին: Հայդուկը ցանկանում է «իր սիրելի հայրենիքը ազատված տեսնել տիրանի ճնշումից, իր արյունակից եղբայրներին փրկել բարբարոս ձեռքից... սրանց հասնելու համար նա չէ ինչպես ամեն սարսափելի միջոցներ»⁴: Բաֆֆին ուզում էր իր «Կայծեր» վեպը վերամշակել և հրատարակել «Հայդուկներ» վերնագրով: Սակայն ստաջադած քաղաքական անբարենպաստ մթնոլորտի պատճառով նրա ձեռնարկումն ապարդյուն անցավ⁵:

Հայդուկային շարժումներն Արևմտյան Հայաստանում առաջացան տարերանորեն, կուսակցությունների երեսան գալուց դեռ սուտաջ: Նրանք սերվում էին գերազանցապես դյուղացիներից ու մասամբ քաղաքացիներից, ցրված էին երկրի տարբեր վայրերում: Այսպես, Մարզվանում ու Եվդոկիայում 1870—1880-ական թվականներին դործում էր Հովհաննես Մինաս օղլու խում-

1 Ռուսաստանի արտաքին բաղադականության արխիվ, 1901, ց. 482, գ. 711, թ. 41 (հետազգայում՝ ՌԱՔԱ):

2 Բաֆֆի ի. Երկրի ժողովածու. հ. 9, Երևան, 1964, էջ 316:

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում, հ. 9, էջ 316:

5 Նույն տեղում, հ. 5, էջ 522:

բը, Սերաստիայում նշանավոր էր Ղումրիկ-Կարապետի ջոկատը, Սալաթիսայում հայտնի էին ատիլամահիցի Սարգսի և Ծամոսն Եհմեղի (Հովհաննիս Սեփերճյանի), իսկ Մշո դաշտում՝ գերեզմանքի Մխոյի և կոորբերոցի Արարոյի խմբերը և այլն⁸։

1890-ական թվականների կեսերից հայդուկային շարժումներն Արևմտյան Հայաստանում հատկանշվեցին վերելքով։ Երկիր մտան նոր խմբեր, որոնք կաղմակերպվում և ուղարկվում էին հայ բաղաբական կուսակցությունների, գերազանցապես դաշնակցականների կողմից։ Այդ կուսակցությունները հայրենասիրական պրոպագանդայով իրենց ցանցի մեջ ընդգրկեցին նաև Արևմտյան Հայաստանում դորժող հայդուկներին, մանավանդ, երբ դեմքեր տրամադրեցին, որոնց կարիքը նրանք խստորեն դգում էին։

Հայդուկային պայքարի պատմության մեջ նշանավոր էր Սերոբ Վարդանյանի (Աղբյուր Սերոբ, Սերոբ փաշա) դերը։ Նա ծնվել է 1864 թ. Բիթլիսի վիլայեթի Ախլաթ կամ հլաթ գավառակի Սոխորդ գյուղում հլչենց նշանավոր գերդաստանում, որը հայտնի էր 300 տարվա պատմությամբ և հաշակված իր հարստությամբ ու բարի գործերով։ Այդ հյուրասեր գերդաստանում ամենատարբեր առիթներով հանգրվանում էին ինչպես հայեր, այնպես էլ քրդեր ու այլ ազգի մարդիկ։ Սերոբի շրս եղբայրները շարունակում էին իրենց նախնիների լավագույն սովորովյունները. ապրում էին միասին, ունեին ընդարձակ հողեր, կառույցներ, 24 լուծ եզներ, բուդմաթիվ անասուններ ու ոչխարի հոտեր։ Նրանցից մեծը՝ Մանն, գյուղագետ էր, վայելում էր համազուգացիների սերն ու հարգանքը և ունեյ մեծ հեղինակություն։

Սերոբն ազատ էր հույսերից։ Իրենց գյուղի քահանայի մոտ սովորելով գրաձանաշություն, թողնում է ուսումը և մեծ մասամբ զբաղվում որսորդությամբ։ 21 տարեկան հասակում ամուսնանում է Սոխորդի աղջիկներից մեկի՝ քաջակորով ու զեղեցիկ Սոսեի հետ և շարունակում իր զբաղմունքը։ Մի օր էլ երկու քրդեր կռի են բռնվում Սերոբի հետ, կամենալով սպանել նրան ու տիրանալ հրաքանին։ Երիտասարդը հարկադրված դիմում է ինքնապաշտպանության, սպանում է հակառակորդներից մեկին, իսկ մյուսին փախուստի մատնում։ Հորեղբայր Առաքելը բողոքի վիժառությունից ազատելու համար Սերոբին ուղարկում է Կ. Պոլսում բնակվող իր եղբոր մոտ։ Առաքելը պատվաստում է իր հարազատի մեջ հայրենասիրական ու ազատասիրական գաղափարներ և մեծ ազդեցություն է ունենում նրա վրա։ 1891 թ. Սերոբը մշտնում է Դաշնակցության մեջ⁹։

Ախլաթի կալմակամբ, իմանալով, որ Սերոբը մեկնել է Կ. Պոլիս, հեռագրում է մայրաքաղաքի ոստիկանապետին և, հայտնելով նրա հանցագործության մասին, խնդրում ձերբակալել։ Կ. Պոլսի ոստիկանները գտնում են Սերոբին և փորձում են բանտարկել, բայց Սերոբը կարողանում է խուսափել և 1892 թ. մեկնում է Ռումիլիա, հաստատվում Սուլինա քաղաքում և, բացելով սրճարան, զբաղվում առևտրով։ 1893 թ. խուրեռայի պատճառով Սերոբը փախում է խանութը, թողնում է Ռումիլիան, գալիս Բաթում և երթեկում Արևմտյան Հայաստան ու Անդրկովկաս։ 1895 թ. դարնանր Սերոբը վերջնականապես անցնում է Արևմտյան Հայաստան և վերահաստատվում իր ծննդավայրում։ Նրա կենսագիրներից մեկը գրում է. «Հինգ տարի պանդուխտ մնալից ետքը՝ Սերոբ որոշ ծրագրով և ավելի հասունացած ու կաղմակերպված գաղափարներով, վերադարձավ իր հայրենի երկիրը, որուն հողն ու ջուրը կքսու-

⁸ Տարբերայնորեն առաջացած հայդուկային խմբերի մասին Արևմտյան Հայաստանում հանգամանորեն տե՛ս Արշակ Ալպոյաչյան. Պատմություն Եվզոկիո հայոց. Գահիրե, 1952. է 1137։ Նույնի՝ Պատմություն Սալաթիո հայոց. Պեյրութ, 1961, էջ 564, Պատմագիրը հուլամատյան Սերաստիո գավառի հայրության. հ. Ա, կաղմեց Առաքել Ն. Պատիկյան. Պեյրութ, 1974 էջ 639։ Ս. Կ. Պողոսյան. Գոյատևման պայքարի քառուղիներում. Երևան, 1933, և այլն։

⁹ Վ. Փափազյան. Իմ հուշերը. հ. 1, Պատերն. 1950, էջ 141։

շին ղինքը: Իր գործունեության կենտրոնն և վայրը ընտրեց մասնավորապես Ախլաթի գավառը և ընդհանրապես Բաղեշի նահանգը»⁸:

Սերոբը Վարդանյանի անունը հռչակվում է 1890-ական թվականների հայկական կոտորածների տարիներին: 1895 թ. համիդիական 500—600 քրդեր, երբ հարձակվում են Սոխորդի վրա, կամենալով բնաջնջել ու թալանել, նրա բնակիչները արիաբար դիմադրում են: Քրդերը կոտորելով նրանց դիմադրությունը, առաջանում են: Բայց այդ պահին անսպասելիորեն հայտնվում է Սերոբն իր 12 կտրիճներով ու հասցնում հրոսակներին պատշաճ հակահարված: Քրդերը խուճապահար փախչում են, թողնելով 7 դիակ, որոնց թվում նաև իրենց շեյխին: Սերոբը գերի է վերցնում 40 քրդերի, որոնց ձեռքերն ու ոտքերը կապելով, սոխորդցիները հանձնում են նրանց կայմակամին: Բացի Սոխորդից, Սերոբը ջարդերից իրկում է Ախլաթի նաև այլ գյուղերի բնակիչներին: Երբ թուրքական ու քրդական ոճրագործները հարձակվում էին գավառի այս կամ այն գյուղի վրա, բնակիչները դիմում էին Սերոբին, որը «կայծակի պես կհասնի» նրանց օգնության և ջախջախելով վտանգում էր: Իրագրեցները նշում էին, որ 1895 թ. «Ախլաթի 27 գյուղերը Սերոբի խմբի շնորհիվ անվնաս մնացին»⁹: Այդ օրերից նրանք Սերոբի անունը կնքեցին Աղբյուր, այսինքն՝ կյանք պարգևող:

Թուրքական իշխանությունները ձգտում են որսալ Սերոբին: Նրանք ջարձի են դնում ոստիկաններին, ժանդարմներին, զինվորներին ու լրտեսներին. բայց ապարդյուն: Կայմակամը հարցաքննում է Սերոբի գյուղապետ եղբայր Մխեթին, ուզում է իմանալ նրա տարելու վայրը: Սակայն վերջինս պատասխանում է, որ նա տարիներ առաջ մահացել է Խուսսուտանում՝ պսակաբուժության մեջ: Օսմանյան պաշտոնյաները չեն հավատում, կաղմակերպում են զանազան խուզարկություններ, վարում հետախուզություններ, բայց դաբձյալ չեն հասնում արդյունքի: 1896 թ. ձմռանը նրանք լուր են ստանում, որ Աղբյուրը գտնվում է Շամիրամ գյուղից 3 ժամ հեռու: Շտապում են: Սերոբը չի հասցրել թաքնվել և հարկադրաբար կռվի է բռնվում ու կռվելով բարձրանում Նեմրութ սարը: Զինվորները հետապնդում են նրան: Սակայն այդ ժամանակ թեմանձր ամպ մը եկավ ծածկեց ներքովը և իր թևերուն տակ առավ հայրենիքի հարազատ զավակ հալ հերոսը»¹⁰: Այնուհետև Սերոբը իջնում է Շամիրամ. սպա գտնում Ջրհոր և մի քանի օր թաքնվում նրա մոտերքում գտնվող Գրգիռ բարայրում¹¹:

Սերոբի անունը գնալով ավելի ու ավելի է հռչակվում: Գյուղացիները սկսեցին աստվածացնել Աղբյուրի ու երգվել նրա անունով, ստելով՝ «Վերև աստված, ներքև Սերոբ», անվանում էին «Նեմրութի հսկա», Նեմրութի ասլան»¹²: Նրանք սկսեցին առասպելներ պատմել Սերոբի մասին՝ իբր նա մի անգամից 7 քրդի գլուխ է էտրել, բո թուրքերի ձեռքից ազատվելու համար նետվել է վանա լիճը և 3 օր լողալով հասել կիմ անապատը:

Աղբյուրը շրջում էր Բիթլիսի վիլայեթում, կազմակերպում գյուղացիների ինքնապաշտպանությունը, քարոզում հայրենասիրական ու ազատասիրական գաղափարներ, հիմնում դաշնակցական կոմիտեներ և դաստիարակում ժողովրդի գործին նվիրված քաջ ու անձնուրաց երիտասարդներ: Նա իր ջրմեռանդությամբ «հաջողած էր բավական թվով վրիժառու հերոսներ պատրաստել, որոնք հմայված իրենց վարպետեն, այդ հերոսական սրտի տեր

⁸ Աղբյուր Սերոբ և Գևորգ Չավուշ. Աթենք, 1933, էջ 19:

⁹ «Գրողակ», 1901, № 2, էջ 40:

¹⁰ «Գրողակ», 1897, № 3, էջ 60:

¹¹ Անդրանիկի հուշերը. Պետրոպ, 1935, էջ 96:

¹² Մ. Վ ա Ր ա ն դ յ ա ն. 2. 2. Դաշնակցության պատմություն. հ. Ա, Փարիզ, 1932,

զինվորին անձնվեր և հիանալի զործունեութենեն, ամեն զոհարերության և սխրագործության սյուրսատ էին»¹³:

Սերոր վարդանյանը հայապաշտպան զործունեությունը շարունակեց նաև 1890-ական թվականների ջարդերից հետո: 1897 թ. նա շորս ընկերներով համառ կռիվ վարեց Թեղուս գյուղի անասունները հափշտակող քրդերի դեմ: Կռիվը տևեց 6 ժամ, քրդերից սպանվեցին մի քանիսը, իսկ հայերից՝ ոչ ոք: Այդ կռիվ շնորհիվ Սերորը կարողացավ հաբերել թեղուացիների անասունների մի մասը: Ապա նա օգնություն հասավ Ծղուկ գյուղի բնակիչներին, որոնց նախիրը քուրդ հրոսակները օրը ցերեկով բռնում և տանում էին: Տեսնելով, որ գնդակոծումը չի ազդում ավաղակների վրա՝ բղավում է, թե «ես Սերորն եմ», եթե շարունակեք նախիրը տանել, ձեզ «նեմրութի թռչուններուն կեր կընեմ»¹⁴: Երուզակները, լսելով Սերորի անունն ու ձայնը, թողնում են նախիրն ու սարսափահար փախչում:

Ախլաթում Աղբյուրը կատարեց ժողովրդանստ նաև այլ գործեր: Նա բարեխալտման մտքերից գալտառակի վարչակարգում՝ հիմնեց Լուրսբունչյուր գյուղում ձեռներեց մարդկանցից բազկացած մարմիններ և հանձնարարեց նրանց վարել բնակիչների հասարակական-բաղաբական գործերը, գատն ու դատաստանը: Շուտով գյուղացիները սկսեցին խուսափել օսմանյան անարգար ու կաշառակեր պաշտոնյաներից ու դատավորներից և դիմել իրենց վրատահելի ու արդարապատ համագլուցյալներին: Սերորի ձեռնարկումների շնորհիվ Ախլաթում ստեղծվում է անձի ու զուգրի ասպահություն, իսկ դատական գործերում՝ արդարություն: Սարգիկ տել էլն գատնում իրենց հացին ու ջրին:

Համիգյան իշխանությունները, իհարկև, չէին կարող հանդուրժել Ալբյուրի ժողովրդանստ գործունեությունը: Նրանք սկսեցին ամելի եռանդով փնտրել հայդուկապետին: Եվ ահա 1898 թ. հոկտեմբերին Բիթլիսից կես ժամ հեռու դանվող Բարշեն գյուղի բնակիչ Աստվածատուրը հայտնում է օսմանյան պաշտոնյաներին, որ Սերորն իր 17 ֆեղայիներով գտնվում է իրենց գյուղում: Հոկտեմբերի 20-ին կուսակալը ուղարկում է Բարշեն մի ջուկամ պատվիրելով բերել Սերորին՝ ողջ կամ սպանված: Ջոկատը պաշարում է Բարշենը: Սկսվում է թեժ կռիվ, որը տևում է 2 ժամ: Գյուղի բարձունքներում դիրքավորված հայդուկները հաջողությամբ պաշտպանվում են: Թուրքական ջոկատի հրամանատարը, տեսնելով, որ հրացանային զնդակոծումներով չի կարողանում հասնել նպատակին, վերադառնում է Բիթլիս և խընդրում կուսակալից թնդանոթ: Վերջինս տրամադրում է այն և հարցնում. «Կամ կկոտորենք ամենքն ալ, կամ ողջ կբռնենք. այս անգամ ձեռվնուս չեն սգատիր»¹⁵: Եվ թնդանոթները տեղ հասնելով՝ սկսում են որոտալ: Բայց ֆեղայիները շուտով զնդակահարում են թնդանոթաձիգներին և լոնցնում նրանց: Ջոկատի դազադած հրամանատարը հոսումալում է անցնել զորհի: Հայդուկապետն ու նրա ղինակիցները սկսում են հնձել հակառակորդի զինվորներին և փախուստի մատնել նրանց: Իսկ երբ իջնում է դիշերը, ֆեղայիները զուրս են դալիս պաշարումից ու անհետանում: Թուրքերը հետապնդում են նրանց և իմանալով, որ մեկնել են Բոս, դնում պաշարում են այն, հրկիզում են նրա տներին մեկը, ենթադրելով, թե հայդուկներն այնտեղ են թաքնված: Սակայն ողջակիզում են ոչ թե ֆեղայիներին, որոնք չկային այդ տանը, այլ նրա անմեղ 8 բնակիչներին, այդ լվում նաև կանանց ու երեխաներին: Համիգյան հրոսակների այլ ոճրագործության հետևանքով հրդեհվում են նաև հարևան հայերի 5 տները¹⁶: Բիթլիսի խուժանը, իմանալով, որ Աղբյուր Սերորը ազատվել է Բարշենի պաշարումից, տալով մեկ սպանված, իսկ թշնամուց

¹³ Աղբյուր Սերոր և Գևորգ Զավուշ, էջ 23,

¹⁴ «Դրոշակ», 1901, № 4, էջ 73:

¹⁵ «Դրոշակ», 1899, № 1, էջ 6:

¹⁶ Ռ.Ա.ՔԱ, ֆ. «Քաղաքիկ», 1898, ց. 482, գ. 1634, թ. 31—32:

խլելով տասնյակների կյանք, հարձակվում է շուկայի հայերի վրա և թալանում ու կոտորում է նրանց¹⁷:

Իսրշենի կովից հետո թուրքերը Սերոբին սկսում են կոչել «Սերոբ փաշա»: Սակայն նա տհաճությամբ է լսում դա և զայրանում, ասելով՝ «...մենք փաշաներու և աղաներու դեմ կկռվինք, այժմ ես փաշա՞ ըլլամ...»¹⁸:

Օսմանյան հետապնդումներից քիչ թե շատ ապահով լինելու համար Սերոբը ստիպված թողնում է Ախլաթը և բարձրանում Սասուն: Նրա հետ էին Բալաբեկ Կարապետը, Առյուծ Ավագը, Բազդասարը, Ջրհորու երկար Ակոն, Հասուն ու Ֆրիթը, Զուլումաթ Օհանեսը, Շամիրամու Միսաբն ու Սողոն, Հատոն, բիթլիսցի Սուշեղը, բիթլիսցի Սիմոնը, ճարտար Հակոբը և այլ ֆրեզայիներ¹⁹:

Աղբյուրի հակասութանական ելույթներից զայրացած կուսակալը, երբ իր մարդկանց միջոցով հարցնում է նրան, թե ինչ է ուզում, Սերոբը կարճ, բայց բովանդակալից պատասխանում է. «Թողեք մեզ հանգիստ ապրինք»²⁰: Իսկ այնպիսի պահանջ էր, որ երբեք չէր կարող կատարվել օսմանյան պաշտոնյաների կողմից: Եվ կուսակալի կարգադրությամբ ավելրվում է Սերոբենց սուներ, թալանվում ունեցվածքը, ձերբակալվում են մեծ եղբայրը՝ Մխեն ու սրա կինը և փակվում բանտում: Մյուս եղբայրը՝ Զաքարը, դառնում է աստանդական և, ի վերջո, հանգրվանում Սերոբի մոտ: Աղբյուրի կինը՝ Սոսեն իր երկու երեխաների՝ 12-ամյա Հակոբի ու 2 սարեկան փոքրիկի հետ միասին նույնպես բարձրանում է Սասուն ու միանում ամուսնու հայրուկային խմբին: Հետագայում Մխեն ու կինը կարողացան փախչել օսմանյան զնդարներից՝ կրելով իրենց մարմնի վրա համիդյան բանտերում կիրառվող տանջանքների դառն հետքերը: Զգտնելով այլ ելք, սրանք նույնպես համալրեցին իրենց եղբոր հայրուկային շարքերը²¹: Այդպիսով, կործանվեց Սոխորդի շենց նշանավոր գերդաստանը, բնավեր եղան նրա անդամները:

Իայց սուլթանական իշխանությունները չբավարարվեցին դրանով: Նրանք շարունակեցին հետապնդել Սերոբին, խոստանալով գանազան նվերներ ու արտոնություններ իրենց օժանդակող գործակալներին ու լրտեսներին: Եվ գտնվեց մեկը, որ հոգին վաճառեց թուրքերին: Դա Սասունի Գեղաշեն գյուղի բնակիչ Ավեն էր: Օգտվելով այն հանգամանքից, որ Սերոբը 1899 թ. նոյեմբերին հանգրվանել էր Գեղեգյուղանում, ծխախոտի միջոցով թունավորում է նրան և հայտնում Բշարե խալիլին: Հաջորդ օրը, այսինքն՝ նոյեմբերի 25-ին, թուրքական ու քրդական զինախմբերը խալիլի գլխավորությամբ շարժվում են Սասուն և պաշարում Գեղեգյուղանը: Իմանալով այդ մասին, Սերոբը որոշում է կռվել թշնամու դեմ, բայց անկարող լինելով շարժվել, խնդրում է հայրուկաներին դուրս բերել իրեն գյուղից, ապա ասում. «Դրեք զիս սա բարին առաջ, իմ վերջին օրն է, և ջանացեք դուք գեթ ձեր կյանքն ազատել, մնաք բարով»²²: Հայրուկայետի զինակիցները կատարում են նրա կամքը: Մահապարտին պաշտպան են կանգնում նրա կինն ու եղբայրները: Ասկայն Սերոբը չի կարողանում կրակել, նրա մարմինը թուլացել էր, տեսողությունը՝ խափանվել: Թշնամին ավելի ու ավելի սեղմում է օղակը, Բշարե խալիլը մոտենում է, գլխատում մահամեծ հայրուկայետին, իսկ նրա հրոսակները սպանում են զավակին՝ Հակոբին ու եղբայրներին՝ Մխենն ու Զաքարին, գյուղի քահանա տեր Քաջին և հայրուկաներից 4-ին, մյուս 4-ը ազատվում են փախչելով: խալիլը չի հետապնդում նրանց, քանզի արդեն հասել էր իր գլխավոր նպատակին: Այդ թոհ ու բոհում Մխենի կինը՝ քաջասիրտ Տատոն, փախցնում է Սերոբի փոքր երեխային և ազատում սրից ու

17 «Բյուզանդիոն», 1912, № 4884, «Դրոշակ», 1912, № 7—8, էջ 193:

18 «Դրոշակ», 1901, № 7, էջ 120:

19 Մ կ ր տ ի շ Ե ր ի ց յ ա ն. Զորավար Սմբատի հուշերը. Փարիզ, 1936, էջ 116:

20 «Դրոշակ», 1901, № 7, էջ 120:

21 Մ կ ր տ ի շ Ե ր ի ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 116:

22 «Դրոշակ», 1901, № 7, էջ 120:

կրակից: Սոսնն մեծապես սզում է ամուսնու կորուստը, վերցնում է նրա հրապանք և շարունակում կոիվը²⁰, բայց արդեն ուշ էր: Բշարե Խալիլի կարգադրութեամբ թուրք սպաներից մեկը Սերոբի գլուխն ամրացնում է ցցին, նստում ձի և վերցնելով այն, ընկնում Իթիլիս շարժվող զորքի առաջ: Կուսակալը լսելով այդ մասին, ընդառաջ է գնում, շնորհավորում նրա տարած մեծ հաղթանակը, ապա նահատակի պուխը ցուցադրում է քաղաքում, նպատակ ունենալով մի կողմից ընդգծել իշխանութիւնների ուժը, իսկ մյուս կողմից՝ ահաբեկել հայերին: Իրադարձութիւններին ականատես Եղիշի Զիլինկիրյանը պատմում է, որ թափօրը մտավ Իթիլիս, հասավ կառավարչատուն, մարդիկ հավաքվեցին և սկսեցին դիտել տեսարանը: Արարողութիւնը տեքց կես ժամ: Ապա հայդուկապետի գլուխը հանձնեցին քաղաքի եկեղեցու ավագ երեցին, սա էլ՝ իրեն (այսինքն՝ Ե. Զիլինկիրյանին), որը գիշերվա ժամը 3-ին այն թաղեց Ս. Կարմրակ եկեղեցու գավթիում հանգչող 10—12 նահատակների կողքին²¹:

Սուլթան Համիդը դահիճներին պարգևատրեց շքանշաններով ու այլ պարգևներով²²: Իթիլիսի իշխանութիւնները Սոսնին առժամանակ փակեցին բանտում, իսկ հետո ազատ արձակեցին: Նույն Ե. Զիլինկիրյանը շարունակում է. «Ամիսներ հետո զորաց հրամանատար Ալի փաշան հարյուրապետի մը միջոցով ինձ հանձնեց նահատակ Սերոբի կինը՝ Սոսն անունով. սա քանի մը տեղերն գնդակով և րաշույնով վիրավորված ըլլալով՝ հրամանատարը պատվաւար տուն մը դրած և կառավարութեան ծախքով դարմանել սոված էր զայն: Հրամանատարը միշտ կկրկնէր ինձ. «Այդ կինը դուցեղն մը է, ինչ օգնութիւն որ ընեք անոր կ'արժե»: Սոսնն օր մը հանգուցյալի հողակույտի վրա տարի, արտասուք յաշս համբուրեց գերեզմանը ծնկաշոք և լուծեամբ աղոթեց ընդ երկար»²³:

Հայդուկները ըստ արժանվույն պատժեցին դավաճան Ավեին. մի քանի ամիս անց նրանք մտան Ավերի տունը, սպանեցին նրան, ապա՝ մեղսակից եղբորը և վիրավորեցին որդուն²⁴:

Ժամանակակիցները բարձր են գնահատել Աղբյուր Սերոբի գործունեութիւնը: Արշակ Չոպանյանը գրում էր, որ նա «արժանի է, անշուշտ, ոչ միայն հարգանքի, այլ հիացման: Այդ բաղնջի հայը նկարագիր մըն էր, ապրտամբ ու անվախ հոգի մը. Բաֆֆիի Սահրատը իրականացնող տիպար մը»²⁵:

Գերմանացի ճանապարհորդ Վալդմար Բելլը նշում էր, որ Սերոբը մի տեսակ գաղափարական մոլեռանդ է, «որը իսկապես հավատում է և համոզված է իր հեղափոխական գործովը հայ ժողովրդին օգնել կարողանալուն, նորան տաճկական կամ մանավանդ քրդական բռնակալութիւնից ազատելուն, իսկ բոլոր ազգասեր հայերի երազին իրականացմանը—կազմել մի ազատ հայկական թագավորութիւն—գործով մասնակցելուն»: Նա ապա շարունակում է, որ Սերոբի խումբը «մերթ շատ և մերթ քիչ հոգուց էր բաղկացած: Խմբի «գլուխը» կազմում էր ինքը... իր կնոջ և որդու հետ, եղբայրը և նորա կինը, որոնց դեռ նորերս երեք համագլուխացիներ միացել էին, որոնցից մեկը նույնպես իր կնոջով միասին: Բոլոր կանայք գնում էին տղամարդու շորերով և նմանապես ոտքից մինչև գլուխ սպառազինված»: Սրբ թուրքական զորաշտկատները հետապնդում էին, Սերոբը մոլորեցնում էր նրանց լեռներում ու ձորերում, «այնքան ետևից քարշ է տալիս, մինչև որ թուլացած ու հոգնած զորքերը կրկին իրենց պինդորանոցները վերագառնալով վերջ տան անպտուղ որսին»: Նա «սքանչելի կերպով և զարմանալի արագութեամբ տեղեկանում է լրտեսներից իրան սպառնացող վտանգի մասին»²⁶:

20 «Գրողակ», 1899, № 10, էջ 147—148: Մ կ ր տ ի շ Ե Ր ի թ յ ա ն. նշվ. աշխ., էջ 120
 24 Կ. Ս ա ս ու ն ի. Պատմութիւն Տարոնի աշխարհի. Պեչուսթ, 1957, էջ 620—621:
 25 «Գրողակ», 1899, № 10, էջ 147—148, 1901, № 7, էջ 121, 1912, № 7—8, էջ 194:
 26 «Բյուզանդիոն», 28 հոկտեմբերի 1908, № 3665:
 27 Աղբյուր Սերոբ և Գևորգ Չավուշ, էջ 35:
 28 «Անահիտ», 1899, № 1—2, էջ 45:
 29 Նույն տեղում, էջ 81—83:

Վալդմար Բելքը այնուհետև նշում էր, որ Սերոբը նրան էր սեղծ ներդրումի լանջերին, մերթ Սասունում, մերթ Մոսկանում կամ Խուբում: Բնակիչներն ասում են, որ «նրան ձերբակալելու մասին ստածել ւնդա՛ն անկարելի է»⁸⁰: Աղբյուրի իշնամիներն նույնիսկ հիանում էին սրա ձևներեցությամբ, ճարպկությամբ ու քաշով: Նա պարտալից մատուցյալ հետևանքով և զոհվեց կովում: «Այդպես ընկավ ազատության աներկյուղ մարտիկը, և իր հետ՝ իր տղան և իր երեք ընկերները», իսկ էինը «վերաջնջված ձերբակալվեցավ»: «Այդպես վերջացավ շատ սքանչելիում ու շատ սառսափ ներշնչող Սերոբ փաշան, ազատության ծարավով, էղևալով սոգորված, լավը ուզող, բայց ավա՛ղ աղետաբեր մի բնավորություն»:

Վալդմար Բելքն այն հեղինակն էր, որ առաջին անգամ գերմաներեն ընթերցողին ծանոթացրեց Աղբյուր Սերոբի սքանչելի զորոնեությունը և պրուպագանդեց նրա ազատատենչ ոգին գերմանական մամուլում:

Այլ. Իսահակյանը 1899 թ. բանաստեղծություն գրեց՝ «Սերոբի հիշատակին», որի մեջ ասում էր.

Նեմուրա սարը հազար ակն ունի՝
Հազարն էլ Մըշու դաշտն է վայր կերթա.
Մենակ Սերոբի աղբյուր սրտի
Խեղճ ժողովրդի սրտի մեջ կերթա⁸²:

Անդրադանալով ողբերգական վախճանին, բանաստեղծը շարունակում է.

Ա՛յս, բուրդն ու բուրբը վախկոս ես, նամարդ,
Սիրտ շունին կայնել ճակատ առ ճակատ.
Փաշա, փառիշահ աղվես ես, նամարդ,
Սիրտ շունին կովել ճակատ առ ճակատ:
Յոր տարի բուր ետեղ ընկան,
Շվաֆդ տեսան, յոթը ծակ մտան.
Վերջն հազար դավով. հազար խաղերով
Ընկար, քա՛ղ Սերոբ...⁸³:

Այնուհետև պոետը եզրափակում էր.

Կտրին սիրտը քաջ Սերոբի
Արևի պես
Նեմուրա սարում քո՛ց կուտա.
Սարի սառուց, ձյուների մեջ
Քեկուզ թաղեմ՝ չի սառչի,
Ժողովրդի ազատ օրվա,
Պատվի սիրուն՝ չի սառի,
Զուր ճավիտյան չի սառի⁸⁴:

Աղբյուր Սերոբի քաջագործությունները գովերգել են նաև քրդերը: Նրանց հորինած երգերից մեկում ասվում էր.

Մենք ըոգայի հետ զնացինք ներսովա սար,
Մենք այնտեղ տեսանք քաֆիր Սերոբ փաշան
Իր կնոջ ու շանֆիտաներու հետ:

80 «Անահիտ», 1900, № 3, էջ 86:

81 Նույն տեղում, էջ 87:

82 Ավետիք Իսահակյան. Հայրուկի երգեր. Երևան, 1990, էջ 64—65:

83 Նույն տեղում, էջ 65:

84 Նույն տեղում, էջ 66:

Ատեն ևնտր ընկել էին ձու ու դաշտ.
 Ո՛ր ձիւն ունեին և ոչ մի բան.
 Ներ Սերոբ վաշան մեզ տեսավ.
 Մտուզեր հրացանը իր նոսր ատավ.
 Ջանֆիտաներ իր աչ ու ճախ բունցին.
 Մենք մեկ ալ տեսանք, որ Այի Կասոն, Այի Մանմուղը
 Իրենց սիւրեն վար գործեցան.

Սերոբ վաշան կանչեց, բոգա, բոգա,
 Մեզ քող գեա քո գործին:
 Նրև դու մեզ շքողես
 Քո բոլոր մտրտիկներին կիսեզգեսն.

Մենք տեսանք, որ շանուղին
 Մեզ հետ կատակ չըներ.
 Մեզ ոչ սի մեաց ալ ոչ բան մը
 Մենք բողինք գեացինք մեր գործին:

Քաֆիր է այն մարդ,
 Որ ուզենա Սերոբ վաշան սպանել,
 Կրոն ալ ունի նա, հավատ ալ,
 Այդպիսի տղա մեր մեջ իսկի չկա.
 Ափսոս, որ նա «ֆրա» է (այսինքն՝ հազագործ է.— Ա. Հ.)³⁵:

1899 թ. դեկտեմբերին «Դրոշակը» իր առաջնորդողում գրում էր, որ Սերոբը «գրեթե յոթ տարի... դիմագրավ և աննվաճ ապստամբ մը եղավ օսման. յան աշխարհավեր ու թաթարական վարչութիւնի դեմ: Ափ մը ընկերներով ոչ միայն ահուսարսափ ազգեց իր բարբարոս թշնամիին, այլև պատկառանք: Ասբողջ վաշտերու դեմ ինքը լեռ մըն էր Սիփանա սարի պես»: Նա «հարեանի ճշմարիտ հերոս մըն էր... ցեղին ուժեղ, պատերազմիկ, ապրիլ ուղող և լույս աղաղակող ոգին էր... դինքը ծնող հողեն անբաժան»: Ով փորձեր նրան բաժանել իր հողից, «պետք էր մահը աչքը առներ»³⁶:

Չորսուկար Սմբատը գրում էր, որ Սերոբը 1897 թ. «տիրապետող գլխավոր դեմքն էր հեղափոխական շարժման մեջ, ժողովրդին ներշնչած իր համայնքով ու համակրութեամբ և կատարութեամբ ալ պատճառած վախով ու մտահոգութեամբ»³⁷:

Աղբյուր Սերոբի մասին ջերմ տողեր է գրել նաև դաշնակցական կուսակցութեան պատմաբան Մ. Վարանդյանը, անվանելով նրան «Հայ հեղափոխական դուստրազնավեպի ամենեն համայն դեմքերեն մեկը... որ կհիշեցնէ... բոլոր ապստամբ ազգերու լեզենդական հերոսները»: Նա «իբր սիտանտական կազմավածքին կմխացներ բնական խելք և բարոյական բարձր առաքինութիւններ»³⁸: Եվ ապա՝ Սերոբը «առյուծի սիրտ մուներ, բաղցր լեզու, անուշ, վեհանձն բնավորութիւն, որով ամենուրեք սիրելի դարձավ ժողովրդին: Ահագին էր անոր հեղինակութիւնը ամբողջ վիլայեթին մեջ, սարսափն ու պատկառանքը նաև թուրք ու քյուրդ խումաններուն մեջ»³⁹:

Անվանի աղատամարտիկի հայդուկային գործունեութիւնը ուսանելի եղավ հալ երիտասարդների համար, որոնք 1915 թ. հայոց ցեղասպանութեան օրերին արիաբար կանգնեցին իրենց ժողովրդի պաշտպանութեան ու փրկու-

35 Հ ա կ ո բ Շ ա հ պ ա զ յ ա ն. Քյուրդո-հայ պատմութիւն. 4. Պոլիս, 1911, էջ 169:

36 «Դրոշակ», 1899, № 10, էջ 145:

37 Մ կ ը տ ի շ Ե Ր Ի Գ յ ա ն. նշվ. աշխ., էջ 109—110:

38 Մ ի բ ա յ Է Լ Վ ա Ր Ս ը Գ յ ա ն. ՀՀ Դաշնակցութեան պատմութիւն. Երևան, 1992:

էջ 190:

39 Ն ու Վ ն տ ե Ղ ու մ. էջ 191:

իշխան դիրքերում: Իսկ ազնվի ուշ հայդուկապետի հայրենասիրական գործունեությունը ոգևորում ու քաջալերում էր հայ երիտասարդներին դաշառազյան ազատագրական մարտերում:

АХБЮР СЕРОБ

(К 100-летию со дня смерти)

Доктор ист. тор. наук АЗАГ АМБАРЯН

Р е з ю м е

Ахбюр Сероб (Сероб Вартамян) (1864 - 1899) — один из крупнейших представителей западноармянского гайдукского движения конца XIX в. Член дашнакской партии. В период армянских погромов 1890-х годов спас жизнь и имущество жителей нескольких десятков селений Битлисского вилайета от варварского нападения турецких и курдских разбойничьих шаек. Погиб в деревне Гелигюзан (Сасун) в 1899 г.